ԶԱՆԳԵԶՈՒՐԻ 1920—1921 ԹԹ. ԿՌԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հայ ժողովրդի համար բախտորոշ 1918—1921 թթ. պատմության մեջ առանձնակի տեղ է գրավում Հայաստանի Զանգեզուրի գավառի 1920—1921 թթ. գոյամարտը։

Զանգեզուրի՝ 1920 թ. մայիս—1921 թ. հուլիս ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների պատմության ուսումնասիրման համար կարևոր են բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչներ Գ. Չիչերինի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ալ. Մյասնիկյանի հեռագրերը, հրամանները, ճառերը, նշանավոր հեղափոխականներ Ս. Կասյանի, Ա. Մռավյանի հոդվածներն ու ելույթները։

Զանգեզուրի կռիվների մասին առաջին հրապարակումները, որոնք հիմնականում ականատեսների և կռիվների մասնակիցների հուշերն էին, վերաբերում են 20—30-ական թվականներին։ Թեմայի նկատմամբ հետաքրքրությունը մեծապես աճեց Հայրենական մեծ պատերազմից հետո. պատմաբանները հանդես եկան մենագրություններով ու հոդվածներով, պաշտպանեցին դիսերտացիաներ, կազմեցին ու հրատարակեցին փաստաթղթերի ու նյութերի արժեքավոր ժողովածուներ[1]։

Ղարաբաղի և Զանգեզուրի երկրամասերի 1918—1921 թթ. պատմության հարցերը առավել խորությամբ սկսեցին լուսաբանվել Ղարաբաղյան ազատագրական շարժման հուժկու վերելքի և հայության ազգային զարթոնքի մթնոլորտում։ Հրապարակումներով հանդես եկան Շահեն Մկրտչյանը, Հրանտ Աբրահամյանը, Համլետ Հարությունյանը, Ռեմ Ղազանչյանը և ուրիշները։ ՀԽՍՀ ԳԱ հրատարակությամբ 1989 թ. լույս տեսավ Լեռնային Ղարաբաղին նվիրված առաջին կոլեկտիվ աշխատությունը (պատմական տեղեկանք), որին հետևեցին ուրիշ հրապարակումներ՝ «Լեռնային Ղարաբաղը 1918—1923 թթ.» (1992, ռուս.), «Նախիջևան-Շարուրը 1918—1921 թթ.» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1—2) փաստաթղթերի և նյութերի արժեքավոր ժողովածուները։

Թեև այդ աշխատություններն ու ժողովածուները հիմնականում վերաբերում են Ղարաբաղին, բայց դրանցում տեղ գտած նյութերի մի զգալի մասը առնչվում է Զանգեզուրի 1920—1921 թթ. իրադարձություններին։

Տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով Զանգեզուրի 1920—1921 թթ. իրադարձություններին անդրադարձել են ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանը, Ծ. Աղայանը, Գ. Գալոյանը, Գ. Ղարիբջանյանը, Հ. Ավետիսյանը, Լ. Խուրշուդյանը, Վ. Միքայելյանը, անվանի պատմաբաններ Ա. Մնացականյանը, Մ. Արզումանյանը, Խ. Բարսեղյանը, Բ. Ուլուբաբյանը, Հ. Կարապետ-

---

1 *Տե՛ս Ղամարլուից—Զանգեզուր։ Հիշողություններ Հայաստանի քաղաքացիական կռիվներից (հոդվածների ժողովածու), Ե., 1931, Ա. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն, Քաղաքացիական կռիվները Հայաստանում, Ե., 1931, Գ. Օ գ ա ն ե զ ո վ, Հերոսական մատյանում, Ե., 1936, Ա. Հ ա կ ո բ յ ա ն, Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում 1920—1921 թթ., Ե., 1948, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1960, Հին բոլշևիկների հիշողությունները, հ. 1, Ե., 1958, հ. 2, Ե., 1961,* И. Т а и р я н, II-ая Красная армия в борьбе за установление и укрепление Советской власти в Армении, Ер., 1971. *Բ. Խ ո ւ դ ա վ ե ր դ յ ա ն, Զանգեզուր, Ե., 1988։*

յանը, Ս. Ստեփանյանը, Է. Զոհրաբյանը, Վ. Ղաղախեցյանը և ուրիշներ։ Թվարկած աշխատություններից բացի, խնդրո առարկա թեմայով բազմաթիվ հոդվածներ, փաստաթղթերի հավաքածուներ են լույս տեսել ՀՍՍՀ «Պատմա-բանասիրական հանդեսում», «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում և, հատկապես, ՀՍՍՀ Արխիվային վարչության «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում։ Լույս տեսած ժողվածները, մենագրությունները, հոդվածները հնչեցրին այն հեղինակների դերը, որոնք կոլեկտիվ աշխատությունների համապատասխան բաժիններում դրեցին Զանգեզուրի ազգային-ազատագրական պայքարի համառոտ ուրվագծերը։ Այդ աշխատությունների թվում կարևոր են «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» (1967), «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր», մաս I, (Թբիլիս, 1967), «Հայ ժողովրդի պատմություն» (բազմահատորյակ), հ. 8 (1970), «Հայաստանի կոմերիտմիության պատմություն» (1981) գրքերը։

Զանգեզուրի կռիվների պատմությունը լայն արտացոլում է գտել նաև սփյուռքահայ պատմական և հուշագրական գրականության մեջ, թերթերի ու հանդեսների էջերում։ Այս տեսակետից ամենից առաջ հարկ է շեշտել Զանգեզուրի ազատամարտի առաջնորդ, մեծատաղանդ զորավար, պետական ու քաղաքական գործիչ Գարեգին Տեր-Հարությունյանի (Նժդեհ) գրական վաստակը։ Զանգեզուրյան գոյամարտի առաջին պատմաբանն ինքը՝ Նժդեհն է, որը թողել է մեծարժեք հոդվածներ, հուշեր, ուսումնասիրություններ[2]։

Զանգեզուրին նվիրված հուշագրություններով և ուսումնասիրություններով Սփյուռքում հանդես են եկել Ս. Վրացյանը, Ալ. Խատիսյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Հայաստանի առաջին հանրապետության պետական և կուսակցական ուրիշ նշանավոր գործիչներ, ինչպես նաև Վ. Գևորգյանը, Ա. Ստեփանյանը, Բաշդառնեցի Մարտիրոսը, Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկ), Հ. Սահակյանը և այլք։ Հարկ է հատկապես առանձնացնել Հայաստանի Հանրապետության վարչապետ, «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ, Զանգեզուրում վերստեղծված Հայաստանի Հանրապետության կառավարության նախարարապետ Ս. Վրացյանի հուսումնասիրությունները, հուշերը, դիտողությունները, հատկապես նրա մեծարժեք «Կյանքի ուղիներով։ Դեպքեր, դեմքեր, ապրումներ» բազմահատոր երկասիրության Զ հատորը (Պեյրութ, 1967)։

Նշված աշխատություններից զատ, հոդվածներ և հուշագրություններ են լույս տեսել «Հայրենիք», «Գրոշակ», «Վեմ» և ուրիշ հանդեսներում, «Հայրենիք», «Յառաջ», «Ադդակ», «Ասպարեզ», «Լրարեր», «Աշխարհ» և այլ թերթերի էջերում։

Զանգեզուրի 1920—1921 թթ. իրադարձություններին անդրադարձել են ռուս և ադրբեջանցի հետազոտողները։ Ռուս պատմաբաններից հիշատակության է արժանի Ա. Կադիշևը, որի «Ինտերվենցիան և քաղաքացիական պատերազմն Անդրկովկասում» մենագրության մեջ (Մոսկվա, 1960, ռուս.) զգալի տեղ է հատկացված զանգեզուրյան կռիվներին։ Ադրբեջանցի հեղինակներից կարելի է հիշատակել 1920—1921 թթ. գեղարքների մասնակից Նազար Հեյդարովին, որը գրել ու հրատարակել է «Զանգեզուրի լեռներում» պատմահուշագրական գիրքը (Բաքու, 1968, ռուս.)։

Բարձր գնահատելով Զանգեզուրի 1920—1921 թթ. գոյամարտի պատմության ստեղծման ուղղությամբ մինչև այժմ կատարված աշխատանքները՝ կարծում ենք, որ այդ կռիվների ամբողջական գիտական պատմության ստեղծումը պահանջում է շարունակել թեմայի ավելի խորը և ավելի բազ-

---

2 Խատիսյան կանչը (1921 թ.), Լեռնահայաստանի անկման պատճառները (1921 թ.), Էջեր իմ օրագրեն (1924), Ռոդիների պայքարը հայրենի դեմ (1927 թ.), Բաց նամակներ հայ մտավորականության (1929 թ.), Ձեզի ուղղ. շարժը (1932 թ.), Ամերիկա՝ սալամանդրը և իր տակները (1935 թ.), Իմ պատասխանը (1937 թ.)։

մակողմանի ուսումնասիրությունը։ Հենց սկզբից նշենք, որ պատմագիտական բոլոր ուսումնասիրություններում, դրանք հրատարակված լինեն մեզանում թե սփյուռքում, հայ պատմաբանների թե այլազգի հետազոտողների կողմից, Զանգեզուրի 1920—1921 թթ. կռիվները որակված են որպես քաղաքացիական պատերազմ։ Բացառություն են կազմում Նժդեհի երկասիրությունները, որոնցում նա արել է արժեքավոր դիտողություններ, կատարել գիտական բնութագրումներ, որոնց համաձայն նշված ժամանակահատվածում զանգեզուրյան կռիվները եղել են ոչ թե քաղաքացիական, այլ ինքնապաշտպանական, եղել է գոյամարտ։ Սյունիքի ազատամարտի մեծատաղանդ ղեկավարի կողմից զանգեզուրյան կռիվների բնույթին տված այդ դնահատականը օբյեկտիվ է և լիովին ընդունելի։

Ամեն մի պատերազմ իր հետ բերում է արյուն և ավեր։ Բայց քաղաքացիական պատերազմը ազգային ողբերգություն է, անմարդկային՝ իր էությամբ, սարսափելի՝ իր անհաշտությամբ ու անզիջողականությամբ, անբարոյական՝ եղբայրական արյուն թափելու հետևողականությամբ ու կրքով։ Խորհրդային և հակախորհրդային պատմագրության մեջ 1920—1921 թթ. Հայաստանում տեղի ունեցած կռիվների պատմությունը ներկայացված է կողմնակալ ու անզիջում դիրքերից։ Գաղափարական անհաշտության թելադրանքով այդ կռիվները, դրանց մասնակիցները, գործող ուժերը խորհրդային և հակախորհրդային պատմագրության մեջ ստացել են միանգամայն տարբեր, տրամագծորեն հակառակ բացատրություններ ու դնահատականներ։ Հետազոտողների նման մոտեցումները բխել են ոչ միայն այլախոհություն չհանդուրժող կուսակցականությունից, այլև այն բանից, որ այդ կռիվները, հատկապես երբ դրանք վերածվում էին քաղաքացիականի, իրոք եղել են դժոխային և արյունալի։ Կռվող կողմերից յուրաքանչյուրը բարիկադի մյուս կողմում գտնվողին դիտում էր որպես ոխերիմ թշնամի և նրա ոչնչացումը համարում սրբազան պարտք։ Բոլշևիկները միանշանակ մերժում էին բոլոր նրանց, ովքեր չէին ընդունում խորհրդային կարգերը, նրանք դաշնակցականներին անվանում էին «հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ»։ Իրենց հերթին, վերջիններս հայ բոլշևիկներին որակում էին որպես «ազգի դավաճաններ»։

Ինչպես ամեն մի պատերազմում, Զանգեզուրի ազգային-ազատագրական կռիվներում նույնպես բարիկադի տարբեր կողմերում գտնվող հակառակորդները երկուստեք հերոսական շատ էջեր են արձանագրել։ Ե՛վ խորհրդային, և՛ հակախորհրդային պատմագիրները գովերգում էին քաղաքացիական պատերազմը և նրա հերոսներին, բայց որում՝ բացասական ու մերժելի ամեն ինչ վերագրում էին «թշնամուն», իսկ այն, ինչ դրական էր՝ իրենց։ Բնական է, որ նման պայմաններում ընթերցողների համար դժվար է, եթե չասենք՝ անհնարին, ճիշտ կողմնորոշվել, հասու լինել ճշմարտությանը, իսկական պատմությանը։

Ելնելով այս ընդհանուր մոտեցումից՝ կարծում ենք, որ տեղի ունեցած իրադարձությունները անհրաժեշտ է քննության ենթարկել հնարավորին չափ անկողմնակալ դիրքերից՝ հրաժարվելով այս կամ այն գործող ուժերին կամ գործիչներին անհարկի պիտակներ տալուց, «թշնամի» կամ «բարեկամ» որակելուց։ Քաղաքացիական պատերազմի երկու կողմերում միմյանց դեմ կռվել են հայեր, որոնց ղեկավարները առաջնորդվում էին տարբեր գաղափարախոսություններով ու տարբեր բնբռնումներով։ «Հայրենասիրի» ու «դավաճանի» խնդիր չկար, այլ կար ստեղծված ահավոր կացությունից, վտանգներով լի վիճակից իրենց ժողովրդին դուրս բերելու տարբեր ուղիների ու եղանակների ընտրության հարց։ Հայ ազգային ուժերը հարազատ ժողովրդի փրկություն տեսնում էին հայրենիքի անկախ գոյության մեջ։ Հայ բոլշևիկները Հայաստանի համար ելքը համարում էին երկրում խորհրդային իշխանության հաստատումը, հայ ժողովրդի ապագան տեսնում էին միջազգայնականության ուղիներում։ Անկողմնակալ լինելը, սակայն, բնավ

չի նշանակում չեղոք լինել և հանդես գալ անտարբեր դիտողի դերում։ Հարկ է, ասենք կոնկրետ դեպքում ակտիվ վերաբերմունք դրսևորել այս կամ այն իրադարձության նկատմամբ, քաղաքական և ռազմական գործիչների արտրքները գնահատելիս միշտ ելակետ ունենալ դրանց արդարացի կամ անարդարացի լինելը, նաև այն, թե տվյալ գործողությունը կամ արարքը որքանով է բխում հայ ժողովրդի ազգային հավաքական շահերից։ Այսպես, օրինակ, այն ժամանակ, երբ Կարմիր բանակը Զանգեզուր էր գալիս՝ խնդիր ունենալով գավառը միացնել Խորհրդային Ադրբեջանին, իրենց անկախությունը պաշտպանելու համար զանգեզուրցիների հերոսամարտը արդարացի էր, ազատագրական, իսկ երբ արդեն պարզ էր դարձել, որ Զանգեզուրը հաստատապես միանալու է Խորհրդային Հայաստանին, սպառազեն կարմիր զորքերին զանգեզուրցիների հետագա դիմադրությունն այլևս արդարացված չէր։ Պայքարը շարունակվեց ևս երկու ամիս՝ պատճառ դառնալով նոր անիմաստ զոհերի։

Այս ընդհանուր հարցադրումից ելնելով՝ Զանգեզուրի 1920—21 թթ. կռիվների պատմության պարբերացման հիմքում պետք է դնել գավառում ծավալված զոյամարտի տարբեր փուլերը բնութագրող առավել բնորոշ իրադարձությունները։ Առաջին փուլն ընդգրկում է 1920թ. հուլիս-հոկտեմբեր ամիսները, այսինքն՝ Կարմիր բանակի կողմից հուլիսի 5-ին Զանգեզուրի կենտրոն Գորիս քաղաքի ազատումից մինչև նույն թվականի հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած հակաբոլշևիկյան ապստամբությունը և ռուս-ադրբեջանական կարմիր զորքերի դուրս մղումը Սյունիքի սահմաններից։ Երկրորդ փուլը տևում է 1920 թ. հոկտեմբերի 10-ից մինչև նույն թվի նոյեմբերի վերջը, երբ տեղի ունեցավ հակաբոլշևիկյան ապստամբությունը, և արյունալի կռիվներով Զանգեզուրի զինյալները գավառի սահմաններից դուրս մղեցին ռուս-ադրբեջանական կարմիր զորքերին։ Երրորդ փուլն ընդգրկում է չորս ամիս ժամանակաշրջան՝ 1920 թ. դեկտեմբեր—1921 թ. մարտ ամիսները, երբ Սյունիքի ղեկավարությունը և ժողովուրդը հիմնականում զբաղված էին գավառի ներքին կյանքի կանոնավորման և պաշտպանության ամրապնդման խնդիրներով։ Վերջապես, չորրորդ փուլն ընդգրկում է զանգեզուրյան զոյամարտի վերջին շրջանը, այսինքն՝ 1921 թ. ապրիլի սկզբներից մինչև նույն թվականի հուլիսի 12-ը։ Այդ ընթացքում փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտության հետևանքով հաղարավոր տարագիրները Երևանից և Արարատյան դաշտից անցել են Զանգեզուր. նրանք այնտեղ են տարել խուճապ, հուսալքում, պարտվողական տրամադրություններ։ Այս փուլը նշանավորվում է նաև Ալ. Մյասնիկյանի Հայաստան գալով, երբ Զանգեզուրը անվերապահորեն հայտարարվեց Խորհրդային Հայաստանի անբաժան մաս, և գավառում երկրորդ անգամ հաստատվեցին խորհրդային կարգեր, այս անգամ՝ տևականորեն։ Այս կապակցությամբ կարևորվում է նաև Զանգեզուրում 1920—1921 թթ. տեղի ունեցած կռիվների բնույթի պարզաբանումը։

1918 թ. սկզբներից մինչև 1920 թ. հուլիս ամիսը Զանգեզուրի հայերն իրենց զոյությունը պաշտպանում էին գավառն Ադրբեջանին միացնելուն ձգտող տաճկական զավթիչների և մուսավաթական հրոսակների դեմ մղած ազգային-ազատագրական արյունալի կռիվներով։ 1920 թ. ապրիլի վերջին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո այնտեղից Զանգեզուրի վրա եկան ռուսական Կարմիր բանակը և բոլշևիկյան դիմակ հագած խորհրդային Ադրբեջանի կարմիր ասկյարները։ Թեև պատմական դրականության մեջ իշխում է այն տեսակետը, թե այդ զորքերի՝ Զանգեզուր մտնելուց հետո այնտեղ սկսվել են քաղաքացիական կռիվներ, բայց նման պնդումն անընդունելի է, քանի որ չի համապատասխանում իրականությանը։ Սովորական կռիվներն իրենց բնույթով բոլորովին տարբեր են քաղաքացիական կռիվներից։ Եթե առաջին դեպքում գործ ունենք տարբեր պետությունների կանոնավոր բանակների միջև տեղի ունեցող կռիվների հետ,

ապա քաղաքացիական կռվի երկու կողմերում զինված առճակատման մեջ են մտնում միևնույն երկրի, նույն ժողովրդի, նույն ազգի տարբեր հատվածները։ Ելնելով այդ կռիվների հիմնական ու տարբերիչ առանձնահատկություններից, սխալ է Զանգեզուրի գոյամարտի 1920 թ. հուլիս—1921 թ. փետրվար հատվածը քաղաքացիական պատերազմ համարելը, քանի որ երկու կողմից կռվում էին ոչ թե նույն երկրի քաղաքացիներ, ինչպես դա տեղի էր ունենում, ասենք, Ռուսաստանում, այլ տարբեր ազգերի քաղաքացիներ։ Ճակատի մի կողմում միայն հայեր էին, իսկ մյուս կողմում՝ ռուսներ, ադրբեջանցի թուրքեր, տաճիկներ և այլազգիներ։ Զանգեզուրում հայ բնակիչների մի մասը զանգվածաբար չէր պայքարում մյուս մասի դեմ։ Բացառություն էին կազմում մի քանի հարյուր հայ կոմունիստները և նրանց համակիրները, որոնք պայքարում էին խորհրդային իշխանությունը գավառում որքան հնարավոր է շուտ հաստատելու համար։ Նրանցից մի քանի տասնյակ հոգի ռուսական բանակի կազմում կռվում էին գավառի խորհրդայնացման համար։

Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի, նրա հետ գավառի վրա եկած Խորհրդային Ադրբեջանի մուսավաթական գունափոխված ու բոլշևիկացված զորքերի նպատակը նույնն էր՝ զենքի ուժով գրավել Զանգեզուրը և միացնել Ադրբեջանին, մի ծրագիր, որի իրականացումը խափանելու համար կենաց ու մահու կռվի էին ելել գավառի հայ բնակիչները՝ մեծ ու փոքր։

Զանգեզուրյան կռիվների բնութագրմանն այդպես էր մոտենում նաև ինքը՝ Գարեգին Նժդեհը։ Իր հոդվածներից մեկում նա շեշտել է, որ 1920 թ. հուլիսից մինչև 1921 թ. ապրիլի սկիզբը չի կարելի քաղաքացիական համարել։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ փետրվարյան ապստամբությունից հետո ստեղծված «Հայրենիքի փրկության կոմիտեի» զորքերը բողեցին Երևանը և հազարավոր փախստականների հետ ուղղություն վերցրին դեպի Զանգեզուր։ Այդ ժմն ամիսներին, նշում էր Նժդեհը, հակառակորդի «բանակների մեջ էին ռուսը, լատիշը, հրեան, լեզգին, վրացին, թուրքը, թաթարը՝ մի ամբողջ Բաբելոն։ Նրան օգնության էր եկել նաև ակամայից կարմրած հայը՝ անշուշտ, ոչ կռվելու և հաղթելու, այլ մեզ զրկելու անխնա հարվածելու հնարավորությունից»[3]։ Նույն հոդվածում, մի այլ խնդրի առնչությամբ, նա դարձյալ գրում էր, որ այդ ժամանակահատվածում «Մենք եղբայրասպան կռիվներ չենք վարել, յեռնաշխարհը քաղաքացիական պատերազմ չէր տեսել (ընդգծումը մերն է —Ա. Ս.)։ Մենք կռվել էինք թաթարի, թուրքի և նրանց օգնության փութացած կարմիր ռուսի դեմ։ Եվ եղել էինք մեր հարվածների մեջ ազատ նրանց նկատմամբ»[4]։

Նժդեհը համոզված էր, որ Զանգեզուրի դեմ Կարմիր բանակի ռազմական գործողությունները սադրել են բոլշևիկյան կառավարության մեջ գտնվող թուրքասերները, հատկապես տրոցկիստները՝ ի հաճույս պանթուրանականների[5]։ 1955 թ. մարտի 30-ին աքսորավայրից՝ Տայշետից Երևան, հարազատներին գրած նամակում Նժդեհը նշել է, որ «տրոցկիստները, որպեսզի Մոսկվայի մոլորության մեջ գցեն, Զանգեզուրի ինքնապաշտպանությունը ներկայացրին որպես քաղաքացիական պատերազմ։ Այդ առասպելը նրանք հորինել էին գոյություն չունեցող «դաշնակցական խռովության» պատասխանատվությունը Զանգեզուրի բնակչության ուսերին բարդելու նպատակով։ Ցավալի է, որ Ղարաբաղում ... Զափազանց լուրջ կլինեն խոսել 1918—1920 թվականներին Զանգեզուրում դաշնակցական խռովության մասին, երբ հայ բնակչության ֆիզիկական գոյությունը վտանգի մեջ էր»[6]։

---

3 Հայրենիք (ամսագիր, Բոստոն), № 1[illegible] (36), Դեկտեմբեր, 1925, էջ 131։

4 Նույն տեղում։

5 Հանրապետական ([illegible], Երևան), 199[illegible], № 11 (111)։

6 Նույն տեղում։

1921 թ. փետրվարյան ապստամբությունից և հատկապես նրա պարտությունից հետո, երբ բոլշևիկյան զորքերը ապրիլի 2-ին վերագրավեցին Երևանը, այն բանից հետո, երբ Սյունիքի ինքնավարության փոխարեն կանչվեց Լեռնահայաստանը, այդ ժամանակից սկսած Զանգեզուրի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, նրա ռազմաքաղաքական և դաժանագույն փոխվեց քաղաքացիական կռվի, որը տևեց մինչև հուլիսի 12-ը։ Այս փուլում Զանգեզուրի զինյալների դեմ համատեղ կռվում էին ոչ միայն ռուսներ, Ադրբեջանի թուրքեր և տարբեր ազգությունների պատկանող կարմիր զինվորներ, այլև Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը, որի կազմի մեջ գնալով ավելի ու ավելի մեծ թիվ էին կազմում հայ զինվորները։ Այլ խոսքով, հայը սկսել էր կռվել հայի դեմ։ Սակայն պետք է ասել, որ նույնիսկ այդ փուլում կռիվները Զանգեզուրում դժվար է դասական իմաստով քաղաքացիական համարել։ Դրանք քաղաքացիական կարելի է կոչել խիստ վերապահորեն և պայմանականորեն։ Այս փուլում Լեռնահայաստանի դեմ կռվում էր Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը, բայց նրա հետ միաժամանակ կռվի էր դալիս ավելի մեծաթիվ ռուսական բանակը՝ իր բազմազգ կազմով։

Զանգեզուրցիների ազգային-ազատագրական պայքարի՝ քաղաքացիական կռվի վերածվելու մասին Նժդեհը առաջին անգամ հարևանցիորեն արտահայտվել է 1921 թ. սեպտեմբերին, ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեին ներկայացրած իր հաշվետվության մեջ[7]։ Հետագայում նա ավելի է հստակեցրել այդ խնդրի վերաբերյալ իր տեսակետը, գրելով. «Այժմ հայն էր կազմում թշնամու ուժերի առաջամարտիկը, որին պարտության մատնելու համար չպիտի կարողանայինք գործի դնելու մեր ուժանակային պայթուցիկ տարրերը, մեր լեռների ժայռերը, մեր ռազմավարության տարբերային ձևերը... մեր վճռականությունը։

Հանուն հայ ժողովրդի գոյության պաշտպանության զենք բարձրացնողները չպիտի կարողանային մեր վարած գոյամարտին տալ եղբայրասպան բնույթ։

«Մի կրակեք, մենք էլ ենք հայ»,—ահա սյունեցու բազուկը անդամալուծող ճիչը։

«Մենք էլ ենք հայ»,—կանչում էին կարմիր ճակատներից Սյունիքի դեմ զոռով քշված Երևանի հայերը։

Թշնամին գիտակցորեն կռիվներին տվել էր քաղաքացիական, եղբայրասպան բնույթ, համոզված, որ նման կռվի համար իր նետած ձեռնոցը չպիտի կարողանանք վերցնել։

«Մենք էլ հայ ենք»...[8]։

Ի մի բերելով քաղաքացիական պատերազմի մասին իր մտքերը՝ Նժդեհն առանձնացրել է դրա հետևյալ մի քանի առավել բնորոշ հատկանիշները. 1. Սովորական պատերազմներում ռազմաճակատը կամ կրակի գիծը, ուր ընդհարվում են կանոնավոր բանակները, հրամանատարության անեղները, գոնե ժամանակի որոշակի հատվածում, համեմատաբար հեշտ է որոշել։ Քաղաքացիական կռվի դեպքում դժվար է երկար ժամանակի համար ծրագրել գործողությունները, քանի որ իրադարձությունները զարգանում են հարափոփոխ կերպով, անսպասելի շրջադարձերով։ 2. Եթե թշնամի բանակների բախման ժամանակ քաղաքացիական բնակչությունը հիմնականում «դիտողի» դերում է, ապա քաղաքացիական կռվի դեպքում չեզոքներ չեն լինում և չեն կարող լինել։ 3. Քաղաքացիական կռվի ելքը մեծապես պայմանավորվում է հասարակական խմբավորումների փոխհարաբերություններով, ժողովրդական զանգվածների առարկայական շահագրգռությամբ։ 4. Բա-

7 Նոր, 1923, № 3, էջ 311։

8 Հայրենիք, 1925, № 12(36), հոկտեմբեր, էջ 131։

դաշտային պատերազմում աննախընթաց նշանակություն են ստանում բարոյական ազդակները: Կռվի ելքը հաճախ վճռում է քաջությունը: 5. Ռազմական գործողությունները ընդունում են գլխավորապես զորաշարժային, հուսավարման (մանևրային) բնույթ և զարգանում են փոթորկային ուժով: 6. Քաղաքացիական պատերազմում այս կամ այն կողմի հողային անգամ զգալի կորուստը նվազ նշանակություն ունի, քան այդ ունենում է սովորական պատերազմներում: 7. Կռվի մեջ մտած կողմերի կատարյալ անհաշտելիությունը քաղաքացիական կռիվներին հաղորդում է աննախընթաց համառություն, դաժանություն և այլն[9]:

«Լեռնահայաստանի գոյամարտը» հոդվածաշարում, որ 1923 թ. սեպտեմբերից սկսած Գարեգին Նժդեհը տպագրել է «Հայրենիք» ամսագրում, Զանգեզուրի հայության ազատագրական պայքարի օրինակով այսպես է կարևորել ընդհանրապես ինքնապաշտպանական կռիվների պատմության ճշգրիտ լուսաբանումը. «Թերևս միայն ազգերի ֆիզիկական ինքնապաշտպանության բարդ գործը կռիվն է, որի հետ չի կարելի փորձեր կատարել առանց փորձանքի ու արնոտ պատժի: Մեր ամեն մի սխալը կռվադաշտում թշնամին մեր արյունով է սրբագրում: Կռվի՝ մարդկային ամենից պատասխանատու գործողության, էությունը յուրացվում է միայն պատերազմների պատմության և պատմական հուշերի բազմակողմանի ուսումնասիրությամբ: Ահա թե ինչ տեսակետից այս կամ այն ժամանակաշրջանի անցքերի նկարագրությունները իրենց խոշոր արժեքն ունեն գալիք սերունդների համար:

Ընդունելով, որ պատերազմը մի մշտական չարիք է, որ եղել է, կա և պիտի մնա, և որ գուցե դարերն ու մարդկային բարոյական մշակույթը կարողանան մեղմացնել նրա բնույթը, փոխել նրա ձևերը, բայց վերացնել՝ երբե՛ք, կուզեի, որ մեր ժողովուրդը ևս, որ արևի տակ իր անկախ անկյունն ունենալու ձգտումն ունի, պարտադրորեն յուրացնի կռվի բարդ արվեստը, որ եղել է և կմնա մանավանդ մեզ նման փոքր ազգերի ինքնապաշտպանության միակ միջոցը»[10]:

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ В ЗАНГЕЗУРЕ В 1920—1921 ГГ.

А. Г. СИМОНЯН

Резюме

В мае 1920—июле 1921 гг. 11-я Красная армия совместно с азербайджанскими вооруженными формированиями совершила нападение на Зангезур с целью его захвата и подчинения Советскому Азербайджану. Развернулись длительные и кровопролитные сражения между войсками Красной армии и защитниками Зангезура, в результате которых уезд не удалось включить в состав Азербайджана, и он был присоединен к Советской Армении. История вышеуказанных событий освещена в научных трудах и многочисленных воспоминаниях. Самообороне Зангезура посвящен ряд публикаций, вышедших в свет в Армении в 20—30-х годах, авторы которых в основном являлись участниками боев, развернутых в уезде. Интерес к проблеме особенно возрос после Великой Отечественной войны. В этот период вышли работы армянских историков, а также был издан ряд сборников документов и материалов, отражающих боевые действия тех дней.

9 Նույն տեղում, 1925, № 9 (33), հուլիս, էջ 75—76:

10 Նույն տեղում, 1923, № 11, սեպտեմբեր, էջ 71:

По данной проблеме были изданы некоторые работы (в основном воспоминания) также в армянской диаспоре. Неоценимыми достоверными источниками являются статьи и книги руководителя самообороны Зангезура Гарегина Нжде, который в сущности являлся также основоположником научной разработки истории зангезурской эпопеи.

Оценивая значение вышедших в свет работ, следует отметить несостоятельность утверждений их авторов о том, что военные действия в Зангезуре в исследуемый период являлись гражданской войной. На наш взгляд, эти боевые действия преследовали цель самозащиты, поскольку друг против друга выступали не вооруженные армяне, а армяне-защитники своего края, с одной стороны, и русская Красная армия и присоединившаяся к ней захватническая армия Советского Азербайджана—с другой стороны.